«Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2026 թվականի ամառային զորակոչ հայտարարելու և զորացրում կատարելու մասին» Կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

2026 թվականի – Ն

ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ԶՈՐԱՑՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ և 25-րդ հոդվածի 1-ին մասերով ու «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայտարարել 2026 թվականի մայիս 5-ից մինչև օգոստոսի 15-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության արական սեռի այն քաղաքացիների շարքային կազմի պարտադիր զինվորական և այլընտրանքային ծառայությունների ամառային զորակոչը (այսուհետ՝ 2026 թվականի ամառային զորակոչ կամ զորակոչ), որոնց 18 տարին լրանում է կամ որոնց շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից նախկինում տրված տարկետումը դադարում է մինչև 2026 թվականի հունիսի 30-ը ներառյալ, ինչպես նաև «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 19-րդ հոդվածի 1.1-ին մասում նշված արական սեռի քաղաքացիների զորակոչը:

2. 2026 թվականի ամառային զորակոչի շրջանակներում շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչել նաև օրենքի 19.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն մինչև 2026 թվականի մարտի 1-ը կամավոր հիմունքներով շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայություն անցնելու դիմում ներկայացրած իգական սեռի կամ օրենքի 19-րդ հոդվածի 1.2-րդ մասի համաձայն շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու ցանկություն հայտնած արական սեռի

քաղաքացիներին:

3. 2026 թվականի ամառային զորակոչի շրջանակներում մինչև 2026 թվականի օգոստոսի 15-ը ներառյալ զորացրել օրենքով սահմանված ժամկետում շարքային կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային զինվորական ծառայություն անցած զինծառայողներին:

4. Այլընտրանքային աշխատանքային ծառայությունից արձակել սահմանված ժամկետում այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցած ծառայողներին:

5. 2026 թվականի ամառային զորակոչի շրջանակներում զինված ուժերի համալրումը շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության կամ այլընտրանքային զինվորական ծառայության ենթակա քաղաքացիներով իրականացնել 2026 թվականի հունիսի 22-ից մինչև օգոստոսի 15-ը ներառյալ, իսկ օրենքով սահմանված ժամկետում շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայություն կամ այլընտրանքային զինվորական ծառայություն անցած զինծառայողների զորացրումն իրականացնել 2026 թվականի հունիսի 24-ից մինչև օգոստոսի 15-ը ներառյալ:

6. 2026 թվականի ամառային զորակոչի կազմակերպման նպատակով ստեղծել հանրապետական զորակոչային հանձնաժողով՝ համաձայն N 1 հավելվածի, և մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովներ՝ համաձայն N 2 հավելվածի:

7. Հաստատել կենտրոնական բժշկական հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն N 3 հավելվածի:

8. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հետ համագործակցությամբ ապահովել՝

1) զորակոչի նախապատրաստական, քաղաքացիների առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության, ինչպես նաև զինված ուժերի համալրման աշխատանքների կազմակերպման ընթացքում ինֆեկցիոն կամ այլ վարակիչ հիվանդությունների տարածման և զինված ուժեր ներթափանցման դեպքերի կանխարգելման անհրաժեշտ միջոցառումների իրականացումը.

2) զինվորական կոմիսարիատների կողմից քաղաքացիների առողջական վիճակի հետազոտության ուղեգրումը և կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից քաղաքացիներին անհրաժեշտ լրացուցիչ, ստուգիչ կամ հսկողական ուղեգրումների վերաբերյալ եզրակացությունների տրամադրումը ոչ ուշ, քան 2026 թվականի օգոստոսի 10-ը ներառյալ:

9. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության նախարարությունների, պետական կառավարման համակարգի այլ մարմինների և կազմակերպությունների (անկախ կազմակերպական-իրավական ձևերից)

ղեկավարներին՝

1) հայտարարված զորակոչին Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հանրապետական զինվորական կոմիսարիատ և նրա զինվորական կոմիսարիատներ չներկայացած կամ քրեական պատասխանատվության կանչված և հետախուզման մեջ գտնվող զորակոչիկների վերաբերյալ տվյալներ ստանալուց հետո նրանց նկատմամբ կիրառել աշխատանքային, տնտեսական ու այլ ոլորտներում՝ Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված սահմանափակումներ և գտնվելու վայրի մասին անհապաղ իրազեկել իրավասու պետական մարմիններին.

2) իրավասության սահմաններում աջակցել Հայաստանի Հանրապետության զորակոչի ենթակա քաղաքացիների ներկայանալը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հանրապետական զինվորական կոմիսարիատ և դրա զինվորական կոմիսարիատներ:

10. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 405-Ն որոշման N 2 հավելվածով սահմանված հետազոտությունների և պատվաստումների իրականացումն ապահովելու նպատակով հանձնարարել իրավասու ծառայություններին՝ համապատասխան բժշկական հաստատություններին ապահովելու անհրաժեշտ քանակով պատվաստանյութերով, ֆլյուորո (ռենտգեն) և ԷՍԳ ժապավեններով, երևակման նյութերով:

11. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին՝ ապահովել օտարերկրյա պետություններում գտնվող, հյուպատոսական հաշվառման կանգնած, հայտարարված զորակոչին պարտադիր զինվորական ծառայության ենթակա, պարտադիր զինվորական ծառայության զորակոչին ներկայանալու համար Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների կամ հյուպատոսական հիմնարկների կողմից ծանուցված և Հայաստանի Հանրապետություն վերադարձող քաղաքացիների մասին իրազեկումը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հանրապետական զինվորական կոմիսարին:

12. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարին՝

1) ապահովել՝

ա. հասարակական կարգի պահպանությունը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հանրապետական զինվորական կոմիսարիատի զինվորական կոմիսարիատների և հանրապետական հավաքակայանի, ինչպես նաև հարակից տարածքներում,

բ. զորակոչից խուսափող զորակոչիկների որոնումը Հայաստանի Հանրապետության տարածքում և Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ու նրանց ներկայանալը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հանրապետական զինվորական կոմիսարիատի զինվորական կոմիսարիատներ.

2) զորակոչի ընթացքում զորակոչիկների խմբերը՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հանրապետական զինվորական կոմիսարիատի Երևան քաղաքի և մարզերի զինվորական կոմիսարիատներից մինչև հանրապետական հավաքակայան, իսկ հանրապետական հավաքակայանից մինչև Երևանի սահմաններից դուրս փոխադրող ավտոբուսների ուղեկցումն անվտանգ իրականացնելու համար կցել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության և պետական պահպանության գլխավոր վարչության անձնակազմեր:

13. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 5-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը տրամադրել Հայաստանի Հանրապետության տարածքում ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ցանկը՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով զորակոչիկների փոխադրումներն իրականացնելու համար:

14. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարին, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենին՝ զորակոչի ենթակա քաղաքացիների կողմից զորակոչից խուսափելու դեպքերը կանխելու նպատակով զորակոչի ընթացքում ուժեղացնել վերահսկողությունը Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում:

15. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝

1) մինչև 2026 թվականի մայիսի 15-ը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հանրապետական զինվորական կոմիսարիատին տրամադրել մինչև 2026 թվականի հունիսի 30-ը ներառյալ 18 տարին լրացող՝ դպրոցները, ուսումնարանները և քոլեջներն ավարտող, բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության քննություններին մասնակցելու հայտ ներկայացրած արական սեռի քաղաքացիների անվանական ցուցակները.

2) մինչև 2026 թվականի հուլիսի 17-ը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հանրապետական զինվորական կոմիսարիատին տրամադրել Հայաստանի Հանրապետության բարձրագույն կամ հետբուհական ուսումնական հաստատություններ ընդունված զորակոչիկների անվանացուցակը՝ ըստ բնակության վայրի հասցեների և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հանրապետական զինվորական կոմիսարիատի զինվորական կոմիսարիատների.

3) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հանրապետական զինվորական կոմիսարիատի զինվորական կոմիսարիատների բժշկական հանձնաժողովներում նոր նշանակված բժիշկ-մասնագետների համար, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանում պետպատվերի շրջանակներում, կազմակերպել

զորակոչիկների ռազմաբժշկական փորձաքննության 35-ժամյա ծրագրով կատարելագործման դասընթացներ:

16. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության վարչապետ **Ն. Փաշինյան**

Հավելված N 1

ՀՀ կառավարության 2026 թվականի N _____-Ն որոշման

Կ Ա Զ Մ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՀՀ պաշտպանության նախարար (հանձնաժողովի նախագահ)

ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ (հանձնաժողովի նախագահի տեղակալ)

ՀՀ պաշտպանության նախարարության հանրապետական զինվորական կոմիսար

ՀՀ ներքին գործերի նախարար

ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն

ՀՀ գլխավոր դատախազ (համաձայնությամբ)

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար

ՀՀ առողջապահության նախարար

ՀՀ արտաքին գործերի նախարար

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

ՀՀ ՊՆ հանրապետական զինվորական կոմիսարիատի զորակոչի ապահովման վարչության պետ (հանձնաժողովի քարտուղար)

Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավար **Ա. Հարությունյան**

Հավելված N 2

ՀՀ կառավարության 2026 թվականի N _____-Ն որոշման

Կ Ա Զ Մ

ՄԱՐԶԱՅԻՆ (ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ) ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ

Զինվորական կոմիսարիատներ	Հանձնաժողովների անդամներ
<u>Երևան</u>	Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ (հանձնաժ
Երևանի N 1	ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլ
Երևանի N 2	ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության Երևանի ռ
Երևանի N 3	ոստիկանության բաժնի պետ
Երևանի N 4	ՀՀ ՊՆ հանրապետական զինվորական կոմի
	Երևանի N 1, N 2, N 3 և N 4 զինվորական կոմ
	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առաջին ա կազմակերպման բաժնի պետ (հանձնաժողովի
<u>Արագածոտն</u>	Արագածոտնի մարզպետ (հանձնաժողովի նս
Արագածոտնի մարզի	ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության Աշտարակի, Թալինի, Ապարանի, բաժիններ
	ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության Էջմիածնի ռազմական Աշտարակի հենակետի պետ
	ՀՀ ՊՆ հանրապետական զինվորական կոմի
	Արագածոտնի մարզի զինվորական կոմ
	Արագածոտնի մարզպետի աշխատակազմի զորահավաքային բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղ
<u>Արարատ</u>	Արարատի մարզպետ (հանձնաժողովի նաի
Արարատի մարզի	ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության Արտաշատի, Արարատի, Մասիսի, Վեդիի բաժին
	ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության Արարատի ռազմական ոս

	ՀՀ ՊՆ հանրապետական զինվորական կոմիս Արարատի մարզի զինվորական կոմիս Արարատի մարզպետի աշխատակազմի զորահավաքային ն բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղ
Արմավիր Արմավիրի մարզի	Արմավիրի մարզպետ (հանձնաժողովի նա ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության Վաղարշապատի, Բաղրամյանի, Արմավիրի բաժ ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության Էջմիածնի ռազմական ոս ՀՀ ՊՆ հանրապետական զինվորական կոմիս Արմավիրի մարզի զինվորական կոմիս Արմավիրի մարզպետի աշխատակազմի զորահավաքային ն բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղ
Գեղարքունիք Գեղարքունիքի մարզի	Գեղարքունիքի մարզպետ (հանձնաժողովի ն ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխ Վարդենիսի, Գավառի, Մարտունու, Ճամբարակի բ ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության Մարտունու ռազմական պետ ՀՀ ՊՆ հանրապետական զինվորական կոմիս Գեղարքունիքի մարզի զինվորական կոմ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի զորահավաքայի բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղ
Լոռի Լոռու մարզի	Լոռու մարզպետ (հանձնաժողովի նախա ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխ Բազումի, Գուգարքի, Տաշիրի, Ստեփանավանի, Թումանյան պետեր ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության Վանաձորի ռազմական ոս ՀՀ ՊՆ հանրապետական զինվորական կոմիս Լոռու մարզի զինվորական կոմիսա Լոռու մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախա պետ (հանձնաժողովի քարտուղար
Կոտայք Կոտայքի մարզի	Կոտայքի մարզպետ (հանձնաժողովի նա ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխ

	Հրազդանի, Նաիրիի, Չարենցավանի, Գառնիի բաժ ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության Աբովյանի ռազմական ոստ ՀՀ ՊՆ հանրապետական զինվորական կոմիս Կոտայքի մարզի զինվորական կոմիսա Կոտայքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառ ինքնակառավարման հարցերի վարչության պետ (հանձն
<u>Շիրակ</u> Շիրակի մարզի	Շիրակի մարզպետ (հանձնաժողովի նախ ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության Կումայրիի, Մուշի, Ախուրյանի, Անիի, Աշոցքի, Ամասիայի, Ար ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության Գյումրու ռազմական ոստ ՀՀ ՊՆ հանրապետական զինվորական կոմիս Շիրակի մարզի զինվորական կոմիսա Շիրակի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախ պետ (հանձնաժողովի քարտուղար
<u>Սյունիք</u> Սյունիքի մարզի	Սյունիքի մարզպետ (հանձնաժողովի նախ ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխա Մեղրիի, Գորիսի, Սիսիանի բաժինների ա ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության Կապանի, Գորիսի և ոստիկանության բաժինների պետե ՀՀ ՊՆ հանրապետական զինվորական կոմիս Սյունիքի մարզի զինվորական կոմիսա ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի տարածքային կա ինքնակառավարման հարցերի վարչության պետ (հանձն
<u>Վայոց ձոր</u> Վայոց ձորի մարզի	Վայոց ձորի մարզպետ (հանձնաժողովի նա ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության Եղեգնաձորի, Վայքի, Ջերմուկի բաժինների ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության Վայքի ռազմական ոստ ՀՀ ՊՆ հանրապետական զինվորական կոմիս Վայոց ձորի մարզի զինվորական կոմիս Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի զորահավաքային բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղ

Տավուշ Տավուշի մարզի	Տավուշի մարզպետ (հանձնաժողովի նախ ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության Նոյեմբերյանի, Տավուշի, Դիլիջանի, Իջևանի բաժ ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության Իջևանի ռազմական ոստ ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության Բերդի ռազմական ոստ ՀՀ ՊՆ հանրապետական զինվորական կոմի Տավուշի մարզի զինվորական կոմիս Տավուշի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախ պետ (հանձնաժողովի քարտուղար

Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավար **Ա. Հարությունյան**

Հավելված N 3

ՀՀ կառավարության
2026 թվականի N _____-Ն
որոշման

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Զ Մ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Արթուր Սեդրակի Աղաջանյան	- հանձնաժողովի նախագահ (ՀՀ առողջապ նախարարության ներկայացուցիչ)
Արթուր Լեոնիկի Մինասյան	- հանձնաժողովի նախագահի տեղակալ (քիթ-կոկորդ-ականջաբան)
Սալվադոր Մարիոյի Խեչոյան	- թերապևտ
Նշան Գագիկի Հովհաննիսյան	- թերապևտ
Սևան Զորկինի Իրիցյան	- թերապևտ
Անի Պավելի Սեդրակյան	- սրտաբան
Մարինե Ռոբերտի Հակոբյան	- սրտաբան
Արսեն Ալբերտի Գուլիքեհվան	- սրտաբան
Վարազդատ Մնացականի Սահակյան	- նյարդաբան
Դիանա Լևոնի Դավթյան	- նյարդաբան
Գեղամ Հայրապետի Բարսեղյան	- մաշկաբան
Ստեփան Վարդանի Գևորգյան	- ուրոլոգ
Դավիթ Գևորգի Գևորգյան	- վիրաբույժ
Թեհրան Ֆրիկի Նավիկյան	- վնասվածքաբան
Լևոն Գագիկի Ներսիսյան	- վնասվածքաբան
Արթուր Վարիկի Ազատյան	- քիթ-կոկորդ-ականջաբան
Աշոտ Արթուրի Ղազարյան	- ակնաբույժ
Ռուբեն Արամայիսի Պողոսյան	- ակնաբույժ
Վահե Գալուստի Հարությունյան	-հոգեբույժ
Ռուդոլֆ Կնյազի Սարգսյան	-հոգեբույժ
	-հանձնաժողովի քարտուղար, համակարգչ

Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավար **Ա. Հար**